

1.3. Գներ և սակագներ

Գների փոփոխությունները 2002թ. հուլիսին,
ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների

(%-ով՝ նախորդ ամսվա նկատմամբ)

	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾
Հունվար	102.2	102.9	101.0	99.5	101.8	101.2
Փետրվար	99.3	100.8	99.8	100.1	95.8	100.2
Մարտ	99.4	99.6	100.0	100.5	99.5	97.7
Ապրիլ	102.5	99.8	99.6	101.2	98.8	101.4
Մայիս	101.7	101.6	100.1	100.8	100.4	100.8
Հունիս	99.5	106.1	100.2	100.3	73.3	100.4
Հուլիս	95.0	98.3	100.0	99.6	80.6	104.7
Հուլիսը 2001թ. դեկտեմբերի նկատմամբ	99.4	104.1*)	100.7	102.1	88.4*)	103.0*)
2002թ. հունվար- հուլիսը 2001թ. հունվար- հուլիսի նկատմամբ	101.7	103.3	105.5	103.6	105.8	99.6

*) 2002թ. հուլիսի և 2001թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում (բացի Արարատի մարզից) 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

²⁾ Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 255 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով:


³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁶⁾ Ըստ 6000 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:

Գների, սակագների աճի տեմպերը 2001-2002թթ. հուլիսին
(% -ով՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)



Գների միջին ամսական փոփոխությունները 2000-2002թթ. հունվար-հուլիսին՝ ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների ու ապրանքախմբերի


(տոկոսներով)

	2000	2001	2002
Սպառողական գների ինդեքս	99.75	100.15	99.9
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	99.5	100.2	99.8
ոչ պարենային ապրանքների	100.4	99.95	100.1
ծառայությունների	100.2	100.1	100.2
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս	100.1	100.5	101.3
Գների ինդեքսը կապիտալ շինարարությունում	100.0	100.9	100.1
Բեռնափոխադրումների սակագների ինդեքս	100.5	100.0	100.3
Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքս	89.7	92.85	92.25
Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս	101.05	100.4	100.9

Արտարժույթային շուկա: 2002թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետության թե՛ սպառողական, թե՛ արտարժույթի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի նվազում՝ կազմելով համապատասխանաբար՝ 5.0% և 2.6%:

Հուլիսին 2001թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների 0.6% գնանկումը ուղեկցվել է հաշվարկային փոխարժեքի 0.2% հավելաճով: 2001թ. նույն ժամանակահատվածում արձանագրվել է սպառողական գների աճ՝ 1.0%, և հաշվարկային փոխարժեքի նվազում՝ 0.1%: 2002թ. հուլիսին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը կազմել է 565.86 դրամ, ինչը 2.1%-ով գերազանցել է 2001թ. հուլիսին արձանագրված համապատասխան ցուցանիշը (554.04 դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2001-2002թթ. հունվար-հուլիսին
(%-ով՝ մախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)



Սպառողական գներ: ՀՀ սպառողական շուկայում 2002թ. ապրիլ-մայիսին գրանցված 4.3% սղաճին հունիս և հուլիս ամիսներին հաջորդել է համապատասխանաբար 0.5 և 5.0% գնանկում՝ պայմանավորված պարենային որոշ ապրանքատեսակների, հատկապես գյուղատնտեսական մթերքների, գների սեզոնայնությամբ, ինչպես նաև արժույթային շուկայում դրամ-ԱՄՆ դոլար փոխարժեքի նվազմամբ:


2002թ. հուլիսին հունիսի համեմատ պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գները նվազել են 7.1%, ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.2%, իսկ ծառայությունների սակագներն ընդհանուր առմամբ մնացել են անփոփոխ:

2002թ. հուլիսին 2001թ. դեկտեմբերի համեմատ առաջին անգամ տարվա ընթացքում արձանագրվել է սպառողական գների նվազում և ինդեքսը նշված ժամանակահատվածում կազմել է 99.4%, մախորդ տարվա նույն ժամանակահատվածի 101.0% դիմաց: Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ինդեքսը կազմել է 98.6%, ոչ

պարենային ապրանքների՝ 100.9%, ծառայությունների սակագների՝ 101.6%:


2002թ. հունվար-հուլիսին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.1%, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 0.15% միջին ամսական հավելաճի դիմաց:

Սպառողական գների հավելաճը 1995-2002թթ. հուլիսին
(%-ով՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)



2002թ. հուլիսին 2001թ. հուլիսի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 101.2%, այդ թվում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 101.2%, ոչ պարենային ապրանքների՝ 100.8%, ծառայությունների սակագների՝ 101.7%, իսկ հունվար-հուլիսին 2001թ. հունվար-հուլիսի համեմատ՝ համապատասխանաբար 101.7%, 102.3, 99.6 և 100.9%:

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2002թ. հունվար-հուլիսին
(%-ով՝ նախորդ ամսվա նկատմամբ)




Պարենային ապրանքների գներ: 2002թ. հուլիսին 2001թ. դեկտեմբերի համեմատ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 0.4% գնանկում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1.0% գնաճի դիմաց:

2002թ. հուլիսին շարունակվել է դեռևս հունիսին արձանագրված պարենային ապրանքների գնանկման միտումը՝ կազմելով 8.8%, այդ թվում հունիսին՝ 1.0%, հուլիսին՝ 7.9%, ընդ որում դիտարկված ապրանքախմբերից մեծ մասի գները նշված ժամանակահատվածում ունեցել են նվազման միտում, բացառությամբ շաքարավազի և մսամթերքի, որոնց գներն աճել

են համապատասխանաբար՝ 1.6% և 0.4%: Գնանկման հիմնական մասը բաժին է ընկել բանջարեղենի, մրգի, ձվի և ձկնամթերքի ապրանքախմբերին: Ունենալով սպառողական զամբյուղում 13.85% տեսակարար կշիռ, նշված չորս ապրանքախմբերի միջին գնանկումը կազմել է 27.1%:


Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2002թ. հուլիսին 2001թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է 11.9% գնանկում, ինչը 5.0 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (6.9%): 2002թ. ապրիլ-մայիսին բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում արձանագրված 33.0% ընդհանուր գնաճին հունիսին հաջորդել է 11.4%, իսկ հուլիսին՝ 35.6% գնանկում: Վերջինիս մեծապես նպաստել է կանաչ լոբու (66.9%), կանաչ պղպեղի (57.0%), սմբուկի (53.8%), թարմ կաղամբի (42.7%), լոլիկի (42.4%), կարտոֆիլի (41.2%), գլուխ սոխի (14.3%) գների կտրուկ նվազումը: Հանրապետությունում դիտարկված բոլոր 10 բնակավայրերում գրանցվել է բանջարեղենի և կարտոֆիլի գնանկում՝ 41.5-24.8% (ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է Վաղարշապատ քաղաքում): Երևանում արձանագրվել է բանջարեղենի և կարտոֆիլի 37.4% գնանկում:

Բանջարեղենի գների ամսական փոփոխությունները 2000-2002թթ. հունվար-հուլիսին
(%-ով, նախորդ ամսվա նկատմամբ)



Չնայած 2002թ. հուլիսին հունիսի համեմատ մրգի ապրանքախմբում արձանագրված 20.7% գնանկմանը, 2001թ. դեկտեմբերի համեմատ դեռևս պահպանվել է գնաճի միտումը՝ կազմելով 29.2%: Ընթացիկ ամսում գրանցված գնանկումը հիմնականում պայմանավորվել է ծիրանի (46.0%), ձմերուկի (40.4%), խնձորի (25.6%) և դեղձի (25.2%) գնանկմամբ:

Մրգի գների փոփոխությունները 2000-2002թթ. հունվար-հուլիսին
(%-ով՝ նախորդ ամսվա նկատմամբ)



2002թ. փետրվար, մայիս-հուլիսին արձանագրվել է ձվի գնի նվազում, ընդ որում վերջին 3 ամիսների ընդհանուր գնանկումը կազմել է 26.8% (հուլիսին՝ 16.5%): ՀՀ դիտարկված բնակավայրերից միայն Եղեգնաձոր քաղաքում է ձվի գինը մնացել նախորդ ամսվա մակարդակին, իսկ մնացած 9-ում արձանագրվել է ձվի գնանկում՝ 25.0-1.6%: Երևանում ձվի գինը նվազել է 19.4%-ով:

2002թ. հուլիսին 2001թ. դեկտեմբերի համեմատ ձկնամթերքի գնաճը կազմել է 7.4%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 32.3% գնանկման դիմաց: 2002թ. մայիս-հուլիսին արձանագրվել է ձկնամթերքի 29.6% գնանկում, այդ թվում հուլիսին՝ 15.8%: Վերջինս հիմնականում պայմանավորվել է թարմ և ապխտած ու աղ դրած «սիգ» տեսակի ձկան 16.0% և 17.5% գնանկումով: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում ձկնամթերքի գները նվազել են 52.0-10.1% (գնանկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Թալինում): Երևանում ձկնամթերքի գները նվազել են 12.6%, իսկ ք. Կապանում պահպանվել է գների հունիսին գրանցված մակարդակը:

Կենդանական և բուսական յուղի, կաթնամթերքի, հացամթերքի, սուրճի, թեյի, կակաոյի, հրուշակեղենի, ոչ ոգելից խմիչքի ապրանքախմբերում 2002թ. հուլիսին հունիսի համեմատ գրանցվել է 0.9-0.1% գնանկում:

Նշված ժամանակահատվածում գրանցվել է ոգելից խմիչքի և ծխախոտի 0.1% գնանկում, ընդ որում, ոգելից խմիչքի գնաճը կազմել է 0.2%, իսկ ծխախոտի գինը նվազել է 0.1%:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի

(տոկոսներով)

	2002 թ վ ա կ ա ն ի			
	<i>հուլիսը</i>			հունվար-հուլիսը 2001թ. հունվար-հուլիսի նկատմամբ
	2001թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. հունիսի նկատմամբ	2001թ. հուլիսի նկատմամբ	
Պարենային ապրանքներ				
(ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	98.6	92.9	101.2	102.3
Պարենային ապրանքներ	99.6	92.1	102.8	103.0
հացամթերք	98.6	99.7	97.7	98.0
մսամթերք	103.5	100.4	103.4	102.7
ձկնամթերք	107.4	84.2	178.9	169.4
կաթնամթերք	98.1	99.3	101.1	100.5
ձու	82.9	83.5	104.6	112.4
կենդանական և բուսական յուղ	99.1	99.1	102.2	101.5
միրգ	129.2	79.3	118.0	117.3
բանջարեղեն և կարտոֆիլ	88.1	64.4	105.8	103.1
շաքարավազ	103.0	101.6	98.0	102.0
սուրճ, թեյ, կակաո	98.6	99.9	98.2	98.8
հրուշակեղեն	100.3	99.9	101.9	101.0
ոչ ոգելից խմիչք	101.9	99.9	101.7	99.9
այլ մթերքներ	99.9	99.9	100.1	99.9
<i>Ոգելից խմիչք և ծխախոտ</i>	91.4	99.9	91.0	95.7

Ոչ պարենային ապրանքների գներ. 2002թ. հուլիսին 2001թ. դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 0.9% գնաճ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.6% գնանկման դիմաց:

2002թ. հուլիսին հունիսի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գներն աճել են համապատասխանաբար՝ 5.9% և 0.4%: 2002թ. հուլիսին 2001թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է բենզինի 12.2% գնաճ, իսկ դիզելային վառելիքի գծով՝ 2.8% գնանկում:

2002թ. հուլիսին հունիսի համեմատ վառելիքի գներն աճել են 7.7%, պայմանավորված հեղուկ գազի 11.4% գնաճով: Ոչ պարենային մյուս ապրանքախմբերում, բացառությամբ լվացամիջոցների և գեղահարդարման ապրանքների, որոնց գներն աճել են 0.1%, արձանագրվել է

գնանկում 1.5-0.1%, իսկ խոհանոցային սպասքի և անձնապիտո ապրանքների գները մնացել են նախորդ ամսվա մակարդակին:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները
(տոկոսներով)

	2002 թ վ ա կ ա մ ի			
	հուլիսը			հունվար-հուլիսը 2001թ. հունվար- հուլիսի նկատմամբ
	2001թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. հունիսի նկատմամբ	2001թ. հուլիսի նկատմամբ	
Ոչ պարենային ապրանքներ	100.9	100.2	100.8	99.6
<i>այդ թվում՝</i>				
հագուստ և կտորեղեն	100.4	99.2	101.6	101.3
վառելիք	92.9	107.7	100.1	94.7
կահույք	100.3	98.6	102.1	102.5
գորգեղեն	100.9	99.8	101.3	101.1
տեքստիլեղեն	97.5	99.6	98.4	99.8
կենցաղային էլեկտրաապրանքներ	98.4	99.2	97.4	98.3
խոհանոցային սպասք	100.7	100.0	103.2	103.2
լվացամիջոցներ	99.6	100.1	105.0	105.8
շինանյութեր	99.3	99.7	99.1	99.8
այգեգործական ապրանքներ	99.3	99.6	98.1	98.9
դեղամիջոցներ	96.0	99.9	93.8	93.3
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	109.1	104.5	101.4	93.7
մշակույթի ապրանքներ	100.1	99.0	101.9	101.4
գրենական պիտույքներ	101.9	99.7	103.7	104.2
զեղահարդարման ապրանքներ	100.6	100.1	101.3	101.3
ոսկերչական ապրանքներ	102.7	98.9	103.3	101.8
անձնապիտո ապրանքներ	100.1	100.0	101.9	100.3

Ծառայությունների սակագներ: 2002թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետությունում արձանագրված ծառայությունների սակագների անփոփոխ ընդհանուր մակարդակի պայմաններում տրանսպորտի ծառայությունների սակագներն աճել են 0.4%-ով (պայմանավորված միջքաղաքային տրանսպորտի ծառայությունների սակագների 0.6% հավելաճով): Նշված ժամանակահատվածում կապի ծառայությունների ոլորտում գրանցվել է սակագների 0.2% հավելաճ պայմանավորված հեռախոսային խոսակցությունների թուլացմամբ: Կրթության համակարգի, հանգստի կազմակերպման, կենցաղային ծառայությունների սակագները նվազել են 1.2-0.1%, իսկ բնակարանային-կոմունալ, բուժսպասարկման, իրավական ու բանկային, մշակույթի, հանրային սննդի ծառայությունների սակագները մնացել են նախորդ ամսվա սակագների մակարդակին:

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

(տոկոսներով)

	2002 թ վ ա կ ա մ ի			
	հուլիսը			հունվար-հուլիսը 2001թ. հունվար- հուլիսի նկատմամբ
	2001թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. հունիսի նկատմամբ	2001թ. հուլիսի նկատմամբ	
Ծառայություններ, ընդհանուր	101.6	100.0	101.7	100.9
<i>այդ թվում՝</i>				
կենցաղային	100.3	99.9	101.1	101.1
բնակարանային-կոմունալ	100.1	100.0	100.1	100.0
բուժսպասարկման	98.9	100.0	96.1	95.8
տրանսպորտի	101.6	100.4	100.9	100.1
կապի	113.1	100.2	114.3	107.5
մշակույթի	119.0	100.0	120.8	112.4
կրթության համակարգի	100.0	98.8	104.2	104.9

	2002 թվականի			
	հուլիսը			հունվար-հուլիսը 2001թ. հունվար- հուլիսի նկատմամբ
	2001թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. հունիսի նկատմամբ	2001թ. հուլիսի նկատմամբ	
հանգստի կազմակերպման	109.4	99.4	108.1	105.7
հանրային սննդի	99.6	100.0	99.7	100.1
իրավական և բանկային	100.0	100.0	100.0	100.0

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: 2002թ. հուլիսին հունիսի համեմատ ՀՀ դիտարկվող բոլոր բնակավայրերում գրանցվել է սպառողական գների 6.3-3.9% նվազում, ինչը պարենային ապրանքների 9.9-6.1% գնանկման արդյունք է:

ՀՀ հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2002թ. հուլիսի 30-ի դրությամբ

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս կավարի	Պա- նիր	Կա- րագ	Բուսա- կան յուղ, լիտր	Չու, տաս- նյակի համար	Շաքա- րա- վազ	Կար- տոֆիլ	Գլուխ սոխ	Կա- ղամբ	Խնձոր
ՀՀ, ընդամենը	1136	1287	1370	569	338	255	99	176	85	275
<i>այդ թվում</i>										
Երևան	1146	1388	1433	577	331	257	93	172	88	288
Գյումրի	1100	1188	1288	557	338	270	105	233	68	313
Վանաձոր	1100	1000	1175	548	323	232	96	183	78	283
Վաղարշապատ	1200	1200	1150	530	300	240	90	150	60	250
Թալին	1200	1200	1300	540	350	250	100	150	80	150
Դիլիջան	1100	1200	1400	588	350	255	110	150	80	300
Հրազդան, Չարենցավան	1150	1150	1250	550	350	250	100	150	70	200
Եղեգնաձոր	1100	1200	1250	565	400	250	130	200	100	300
Մարտունի	1000	1150	1400	600	400	260	140	200	100	300
Կապան	1180	1200	1540	564	400	268	124	230	142	210

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2002թ. հուլիսի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 5590 դրամ, ինչը ընդամենը 0.6%-ով է գերազանցել նույնանուն ապրանքատեսակների 2001թ. հուլիսի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (5555 դրամ):

ՀՀ դիտարկված 9 քաղաքներում 2002թ. հուլիսին հունիսի համեմատ գրանցվել է ոչ պարենային ապրանքների 0.1-0.7% գնաճ (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Թալինում և ք. Կապանում): Գների նվազում արձանագրվել է միայն Հրազդան քաղաքում (ք. Չարենցավանում) (0.1%):

Որոշ ոչ պարենային ապրանքախմբերի գների փոփոխությունները 2002թ. հուլիսին ըստ դիտարկվող քաղաքների

(%-ով՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ)

	Հագուստ և կտորե- ղեն	Կոշիկե- ղեն	Վառելիք	Դեղամի- ջոցներ	Կենցաղային էլեկտրա- ապրանքներ	Մշակույ- թի ապ- րանքներ	Գրենական պիտույք- ներ	Գեղահար- դարման ապրանք- ներ
ՀՀ, ընդամենը	100.4	102.4	92.9	96.0	98.4	100.1	101.9	100.6
<i>այդ թվում</i>								
Երևան	101.3	103.0	94.1	96.2	98.7	100.4	102.8	101.4
Գյումրի	98.8	100.1	101.5	97.5	99.0	99.6	99.6	100.4
Վանաձոր	99.7	105.2	83.6	95.9	98.5	98.6	100.0	96.1
Վաղարշապատ	97.0	98.9	87.1	95.8	101.5	100.5	100.8	99.8
Թալին	99.2	100.8	87.3	93.9	99.8	100.7	100.7	98.7
Դիլիջան	100.2	101.7	97.1	94.5	100.9	101.6	100.0	100.1

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Հագուստ և կտորե- ղեն	Կոշիկե- ղեն	Վառելիք	Դեղամի- ջոցներ	Կենցաղային էլեկտրա- ապրանքներ	Մշակույ- թի ապ- րանքներ	Գրենական պիտույք- ներ	Գեղահար- դարման ապրանք- ներ
Հրազդան, Չարենցավան	98.1	99.7	90.7	90.9	91.6	100.1	99.3	102.5
Եղեգնաձոր	102.6	99.7	84.6	100.4	97.9	100.3	93.6	96.2
Մարտունի	100.5	105.0	93.3	98.6	100.3	99.1	107.7	100.3
Կապան	100.7	99.6	93.7	99.7	93.8	98.6	101.0	96.7

Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2002թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետությունում դիտարկված 2 բնակավայրերում գրանցվել է սակագների 1.0-0.1% նվազում, 4-ում՝ սակագները մնացել են նախորդ ամսվա սակագների մակարդակին, իսկ մյուս 4-ում՝ հավելված 0.1-0.3%:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսները 2002թ. հուլիսին ըստ դիտարկվող բնակավայրերի և ապրանքախմբերի

(%-ով՝ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ)

	Սպառողական գների ինդեքսը	սպառողա- կան ապ- րանքների	դրանցից			ժառանգ- յունների
			պարենային ապ- րանքների (ներառ- յալ ոգելից խմիչք և ծխախոտ)	պարենային ապրանքների	ոչ պարենային ապրանքների	
ՀՀ, ընդամենը	99.4	99.1	98.6	99.6	100.9	101.6
<i>այդ թվում</i>						
Երևան	99.2	98.8	98.2	99.1	101.4	101.6
Գյումրի	100.3	99.7	99.6	100.1	99.9	103.8
Վանաձոր	99.4	99.1	98.8	99.8	100.8	101.1
Վաղարշապատ	98.4	98.0	97.8	98.9	98.7	100.6
Թալին	97.3	96.3	95.4	96.0	100.6	103.1
Դիլիջան	101.0	101.0	101.1	102.5	100.8	101.1
Հրազդան, Չարենցավան	97.7	97.2	96.8	97.4	99.3	100.1
Եղեգնաձոր	102.1	102.2	102.6	104.4	100.7	101.2
Մարտունի	103.8	104.1	104.7	106.7	101.9	101.5
Կապան	100.6	100.5	100.5	102.6	100.6	100.9

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը: 2002թ. հուլիսին 2001թ. դեկտեմբերի համեմատ արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գնաճը կազմել է 4.3%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1.0% գնանկման դիմաց:

Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի

(տոկոսներով)

	2002 թ վ ա կ ա ն ի			2001թ. հունվար- հուլիսը 2000թ. հունվար- հուլիսի նկատմամբ
	հուլիսը		հունվար-հուլիսը 2001թ. հունվար- հուլիսի նկատմամբ	
	2002թ. հունիսի նկատմամբ	2001թ. հուլիսի նկատմամբ		
Ամբողջ արդյունաբերությունը	98.3	104.1	103.3	100.4
<i>այդ թվում</i>				
էլեկտրաէներգետիկա	100.3	100.7	101.7	99.0
գունավոր մետալուրգիա	84.9	129.8	121.4	102.6
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	91.2	95.9	101.0	100.9
մեքենաշինություն	102.7	101.0	99.4	107.1
այլ արդյունաբերական արտադրություն (ոսկերչական արդյունաբերություն)	107.9	95.7	94.7	120.9
անտառային, փայտամշակման, թղթի- ցելյուլոզի արդյունաբերություն	104.2	71.6	96.9	113.5

	2002 թվականի			2001թ. հունվար-հուլիսի 2000թ. հունվար- հուլիսի նկատմամբ
	հուլիսը		հունվար-հուլիսը 2001թ. հունվար- հուլիսի նկատմամբ	
	2002թ. հունիսի նկատմամբ	2001թ. հուլիսի նկատմամբ		
շինանյութերի արդյունաբերություն	99.0	97.7	97.4	101.4
թեթև արդյունաբերություն	107.4	109.7	102.5	95.8
սննդի (ներառյալ ալյուրի ու համակցված կերերի) արդյունաբերություն	102.1	101.7	100.5	98.6
հրատարակչական գործերի արտադրություն	77.2	107.1	105.3	87.1

Բեռնափոխադրումների սակագների հնդեքս: 2002թ. հուլիսին 2001թ. դեկտեմբերի համեմատ ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների հավելաճը կազմել է 2.1%, ինչը 2.1 տոկոսային կետով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը:


Ընդհանուր օգտագործման տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների փոփոխությունները

(տոկոսներով)

	2002 թվականի			
	հուլիսը			հունվար-հուլիսը 2001թ. հունվար- հուլիսի նկատմամբ
	2001թ. դեկտեմբերի նկատմամբ	2002թ. հունիսի նկատմամբ	2001թ. հուլիսի նկատմամբ	
Բեռնափոխադրումների սակագների հնդեքս, ընդամենը	102.1	99.6	104.0	103.6
այդ թվում՝				
երկաթուղային տրանսպորտով	101.7	98.8	103.8	103.9
ավտոմոբիլային տրանսպորտով	99.6	100.2	100.9	100.1
օդային տրանսպորտով	101.0	100.6	102.5	101.9
խողովակաշարային տրանսպորտով	102.2	99.6	104.1	103.7

Գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների հնդեքսները: 2002թ. հուլիսին հունիսի համեմատ գյուղատնտեսական մթերքի իրացման գների 19.4% նվազումը պայմանավորված է հիմնականում Արարատի և Արմավիրի մարզերում համապատասխանաբար՝ 23.2% և 31.6% արձանագրված գների նվազմամբ:

Գյուղմթերքի իրացման գների հնդեքսները ՀՀ մարզերում 2002թ. հուլիսին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի
(%-ով՝ նախորդ ամսվա նկատմամբ)



2002թ. հուլիսին շարունակվել է բուսաբուծական մթերքի կտրուկ գնանկման միտումը՝ այն կազմելով 30.5%, ինչը պայմանավորվել է կարտոֆիլի և բանջարաբուստանային կուլտուրաների 34.5% ու մրգի՝ պտղի ու հատապտղի 30.2% իրացման գների նվազմամբ: Անասնապահության

հական մթերքի իրացման գները նշված ժամանակահատվածում նվազել են 1.6%:

Գյուղատնտեսական մթերքի իրացման միջին գները 1998- 2002թթ. հուլիսին

(դրամ)

	Չափի միավորը	1998	1999	2000	2001	2002
Ցորեն	կգ	97	96	83	87	78
Գարի	„- „	92	91	65	71	75
Կարտոֆիլ	„- „	77	91	47	88	65
Կաղամբ	„- „	115	36	28	74	56
Գազար	„- „	102	55	62	109	126
Գլուխ սոխ	„- „	142	89	112	81	...
Խնձոր	„- „	112	92	75	97	303
Մեղր	„- „	2497	2944	2577	3000	2885
Միս տավարի	„- „	922	839	809	852	881
Միս ոչխարի	„- „	969	871	786	908	944
Միս խոզի	„- „	1311	905	1004	1145	948
Կաթ	լ	105	100	93	92	90
Մածուն	լ	167	170	162	165	169
Պանիր (յուղոտ)	կգ	900	839	687	740	747
Չուլ	հատ	47	41	35	35	38
Միամյա խոտեր	կգ	23	20	17	18	19
Բազմամյա խոտեր	կգ	22	25	19	21	20

... -դիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել:

Գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսը 1998-ում, ըստ մարզերի

(տոկոսներով)

	2002 թ վ ա կ ա ն ի			2001թ. հունվար-հուլիսը 2000թ. հունվար- հուլիսի նկատմամբ
	հուլիսը		հունվար-հուլիսը 2001թ. հունվար- հուլիսի նկատմամբ	
	2002թ. հունիսի նկատմամբ	2001թ. հուլիսի նկատմամբ		
ՀՀ, ընդամենը	80.6	106.5	105.8	113.1
<i>այդ թվում՝</i>				
Արագածոտն	98.6	110.4	99.5	112.4
Արարատ	76.8	109.2	114.0	107.2
Արմավիր	68.4	116.5	136.5	114.0
Գեղարքունիք	99.6	101.0	103.1	115.8
Լոռի	93.6	94.0	98.8	102.8
Կոտայք	98.0	93.6	96.5	107.0
Շիրակ	94.0	95.6	94.1	117.7
Սյունիք	96.9	90.5	92.8	107.8
Վայոց ձոր	101.7	94.8	98.5	111.4
Տավուշ	98.4	95.4	95.4	104.8

2002թ. հուլիսին 2001թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման 3.0% գնաճ, ինչը 1.8 տոկոսային կետով գերազանցել է 2001թ. նույն ժամանակահատվածում արձանագրված ցուցանիշը:

2002թ. հուլիսին 2001թ. հուլիսի համեմատ գյուղատնտեսական արտադրության միջոցների գնման գները նվազել են 1.3%:

2002թ. հուլիսին նախորդ ամսվա համեմատ արձանագրվել է արտադրության միջոցների գնման 4.7% գնաճ, այդ թվում՝ գյուղատնտեսական վճարովի ծառայությունների սակագների՝ 26.7% , էներգիայի և քսայուղերի՝ 4.4%, մեքենա-սարքավորումների և դրանց պահեստամասերի՝ 1.9% և շինանյութերի՝ 0.7% : Նշված ժամանակահատվածում սերմացուների և տնկիների, անասնակերի, պարարտանյութերի, անասունների, էներգիայի ու քսայուղերի, բույսերի պաշտպանության միջոցների և գյուղատնտեսական մանր գործիքների ապրանքախմբերում արձանագրվել է գնման 14.3-0.2% գնանկում: